ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

17 մարտի 2016 թվականի **թիվ 23** քաղ. Մոսկվա

Այն արտադրանքի միասնական ցանկի ձեւավորման ու վարման կարգի մասին, որի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 52-րդ հոդվածն իրականացնելու նպատակով եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի 1-ին հավելվածի 27-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Հաստատել կցվող՝ այն արտադրանքի միասնական ցանկի ձեւավորման ու վարման կարգը, որի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ։

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	Բելառուսի Հանրապետությունից	Ղազախստանի Հանրապետությունից	Ղրղզստանի Հանրապետությունից	Ռուսաստանի Դաշնությունից
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Բ. Սագինտաեւ	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի
մարտի 17-ի թիվ 23 որոշմամբ

ԿԱՐԳ

այն արտադրանքի միասնական ցանկի ձեւավորման ու վարման, որի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ

1. Սույն Կարգը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 52-րդ հոդվածին համապատասխան եւ սահմանում է այն արտադրանքի միասնական ցանկի ձեւավորման ու վարման կանոնները, որի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ (այսուհետ՝ միասնական ցանկ)։

2. Միասնական ցանկի ձեւավորումն ու վարումն իրականացվում են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ համապատասխանաբար՝ անդամ պետություններ, Միություն) առաջարկների հիման վրա։

3. Միասնական ցանկում կարող է ընդգրկվել հետեւյալ արտադրանքը՝

ա) որի նկատմամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ակտերով սահմանվել են պարտադիր պահանջներ՝ մարդու կյանքը եւ (կամ) առողջությունը, գույքը, շրջակա միջավայրը, կենդանիների ու բույսերի կյանքը եւ (կամ) առողջությունը պաշտպանելու, սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունները կանխելու, ինչպես նաեւ էներգետիկ արդյունավետությունն ու ռեսուրսախնայողությունն ապահովելու նպատակներով.

բ) որի նկատմամբ, միջազգային փորձին համապատասխան, սահմանվել են անվտանգության պարտադիր պահանջներ՝ մարդու կյանքը եւ (կամ) առողջությունը, գույքը, շրջակա միջավայրը, կենդանիների ու բույսերի կյանքը եւ (կամ) առողջությունը պաշտպանելու, սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունները կանխելու, ինչպես նաեւ էներգետիկ արդյունավետությունն ու ռեսուրսախնայողությունն ապահովելու նպատակներով.

գ) որին, գիտական տվյալներին եւ (կամ) հետազոտությունների արդյունքներին եւ (կամ) միջազգային կազմակերպությունների տեղեկատվությանը համապատասխան, բնորոշ են մարդու կյանքին եւ (կամ) առողջությանը, գույքին, շրջակա միջավայրին, կենդանիների եւ բույսերի կյանքին եւ (կամ) առողջությանը վնաս հասցնելու եւ (կամ) կորուստներ պատճառելու հնարավորության հետ կապված ռիսկեր.

դ) որի առնչությամբ պետական հսկողության (վերահսկողության) արդյունքներով հայտնաբերվել եւ հաստատվել են մարդու կյանքին եւ (կամ) առողջությանը, գույքին, շրջակա միջավայրին, կենդանիների եւ բույսերի կյանքին եւ (կամ) առողջությանը վնաս հասցնելու եւ (կամ) կորուստներ պատճառելու հետ կապված ռիսկեր։

4. Միասնական ցանկում արտադրանքն ընդգրկելու մասին առաջարկը պարունակում է արտադրանքի տեսակի (տեսակների) կամ խմբի (խմբերի) անվանումը, ինչպես նաեւ միասնական ցանկում ընդգրկելու համար առաջարկվող արտադրանքի նկարագրությունը եւ (կամ) սահմանումը։ Միասնական ցանկում արտադրանքն ընդգրկելու առաջարկին կցվում են հետեւյալ փաստաթղթերը՝

ա) բացատրագիրը,

բ) միասնական ցանկում ընդգրկելու համար առաջարկվող արտադրանքի տեխնիկական կարգավորման հայեցակարգը։

5. Սույն Կարգի 4-րդ կետի «ա» ենթակետում նշված բացատրագիրը պարունակում է՝

ա) միասնական ցանկում արտադրանքն ընդգրկելու հիմնավորումը՝ սույն Կարգի 3-րդ կետին համապատասխան.

բ) նշված արտադրանքի կարգավորման ոլորտում անդամ պետությունների օրենսդրության վերլուծությունը, այդ թվում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված պարտադիր պահանջների եւ համապատասխանության գնահատման համար կիրառվող ընթացակարգերի մասով.

գ) միասնական ցանկում ընդգրկելու համար առաջարկվող արտադրանքի նկատմամբ պարտադիր պահանջների սահմանման ոլորտում միջազգային փորձի վերլուծությունը.

դ) միջազգային ստանդարտների (կանոնների, հրահանգների, առաջարկությունների եւ ստանդարտացման միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված այլ փաստաթղթերի), տարածաշրջանային փաստաթղթերի (կանոնակարգերի, հրահանգների, որոշումների, ստանդարտների, կանոնների եւ այլ փաստաթղթերի), ազգային (պետական) ստանդարտների եւ միասնական ցանկում ընդգրկելու համար առաջարկվող արտադրանքի առնչությամբ ընդունված՝ ստանդարտացման բնագավառի այլ փաստաթղթերի վերլուծությունը.

ե) արտադրանքի պոտենցիալ վտանգավորության աստիճանի գնահատումը՝ ներառյալ մարդու կյանքին եւ (կամ) առողջությանը, գույքին, շրջակա միջավայրին, կենդանիների եւ բույսերի կյանքին եւ (կամ) առողջությանը վնաս հասցնելու եւ (կամ) կորուստներ պատճառելու հնարավորության հետ կապված ռիսկերի մասին տեղեկատվությունը, որը նախապատրաստվել է այն գիտական տվյալների եւ (կամ) հետազոտությունների արդյունքների եւ (կամ) միջազգային կազմակերպությունների տեղեկատվության հիման վրա, որոնք նույնպես կցվում են բացատրագրին։

6. Սույն Կարգի 4-րդ կետի «բ» ենթակետում նշված՝ միասնական ցանկում ընդգրկելու համար առաջարկվող արտադրանքի տեխնիկական կարգավորման

հայեցակարգը պարունակում է՝

ա) միասնական ցանկում ընդգրկելու համար առաջարկվող արտադրանքը կարգավորելու վերաբերյալ առաջարկը՝ Միության տեխնիկական կանոնակարգում (Միության տեխնիկական կանոնակարգերում) միասնական պարտադիր պահանջների սահմանման կամ անդամ պետությունների օրենսդրության մեջ ազգային պարտադիր պահանջների սահմանման միջոցով՝ հաշվի առնելով անդամ պետությունների տնտեսական եւ գիտատեխնիկական զարգացման մակարդակը.

բ) առաջարկվող կարգավորման նպատակները եւ Պայմանագրի X բաժնի դրույթներին դրանց համապատասխանության մասին տեղեկությունները.

գ) առաջարկվող կարգավորման, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների եւ այլ շահագրգիռ անձանց նկատմամբ ազդեցության գնահատումը եւ այն խնդրի լուծման հնարավոր այլ եղանակների նկարագրությունը, որի լուծմանն ուղղված է առաջարկվող կարգավորումը.

դ) Միության այն տեխնիկական կանոնակարգի անվանումը կամ Միության այն տեխնիկական կանոնակարգերի ցանկը, որն առաջարկվում է մշակել՝ միասնական ցանկում արտադրանքն ընդգրկելու կապակցությամբ (այն դեպքում, երբ արտադրանքի կարգավորումն առաջարկվում է իրականացնել Միության տեխնիկական կանոնակարգում (Միության տեխնիկական կանոնակարգերում) միասնական պարտադիր պահանջներ սահմանելու միջոցով).

ե) տեղեկություններ ձեռնարկատիրական եւ այլ գործունեության հիմնական տեսակների, այն շահագրգիռ անձանց մասին, որոնց շահերը կշոշափվեն միասնական ցանկում արտադրանքն ընդգրկելու կապակցությամբ։

7. Միասնական ցանկում ընդգրկելու համար առաջարկվող արտադրանքի տեխնիկական կարգավորման հայեցակարգի դրույթները պետք է համապատասխանեն Պայմանագրի X բաժնի դրույթներին, Միության իրավունքի մաս կազմող՝ տեխնիկական կարգավորման հարցերի վերաբերյալ այլ միջազգային

պայմանագրերին եւ ակտերին։

8. Միասնական ցանկից արտադրանքը հանելու առաջարկը պարունակում է միասնական ցանկից հանելու համար առաջարկվող արտադրանքի տեսակի (տեսակների) կամ խմբի (խմբերի) անվանումը։ Միասնական ցանկից արտադրանքը հանելու մասին առաջարկին կցվում է բացատրագիր, որը պարունակում է՝

ա) միասնական ցանկից արտադրանքը հանելու հիմնավորումներ, որոնց հիման վրա եզրակացություն է կատարվել արտադրանքի պոտենցիալ վտանգավորության եւ մարդու կյանքին եւ (կամ) առողջությանը, գույքին, շրջակա միջավայրին, կենդանիների եւ բույսերի կյանքին եւ (կամ) առողջությանը վնաս հասցնելու եւ (կամ) կորուստներ պատճառելու հնարավորության հետ կապված ռիսկերի բացակայության մասին.

բ) միասնական ցանկից հանելու համար առաջարկվող արտադրանքի նկատմամբ պարտադիր պահանջներ սահմանելու միջազգային փորձի բացակայության մասին տեղեկատվություն.

գ) միասնական ցանկից արտադրանքը հանելու կապակցությամբ պարտադիր պահանջներ սահմանող՝ Միության տեխնիկական կանոնակարգերը կամ անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերը չեղյալ ճանաչելու հետ կապված ռիսկերի վերլուծությունը, այդ թվում՝ պոտենցիալ վտանգավոր արտադրանքը Միության շուկայում շրջանառության մեջ բաց թողնելու հնարավորության մասով.

դ) տեղեկություններ միասնական ցանկից հանելու համար առաջարկվող արտադրանքի նկատմամբ պարտադիր պահանջներ սահմանող՝ Միության տեխնիկական կանոնակարգերի եւ Միության իրավունքի մաս կազմող ակտերի կամ անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերի մասին, որոնք պետք է չեղյալ ճանաչվեն Պայմանագրի 52-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան կամ որոնցում կպահանջվի փոփոխություններ կատարել միասնական ցանկից արտադրանքը հանելու կապակցությամբ (այդ

փոփոխությունների նշմամբ)։

9. Միասնական ցանկում ընդգրկված արտադրանքի տեսակի (տեսակների) կամ խմբի (խմբերի) անվանման մեջ փոփոխություններ կատարելու մասին առաջարկը պարունակում է միասնական ցանկում ընդգրկված արտադրանքի տեսակի (տեսակների) կամ խմբի (խմբերի) անվանումը, նշված անվանման մեջ առաջարկվող փոփոխությունները, այդ փոփոխությունների անհրաժեշտության հիմնավորումը։

Այն դեպքում, երբ առաջարկվող փոփոխությունները հանգեցնում են միասնական ցանկում արտադրանքի տեսակի (տեսակների) կամ խմբի (խմբերի) ընդգրկմանը, առաջարկին կցվում են սույն Կարգի 4-7-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը։

Այն դեպքում, երբ առաջարկվող փոփոխությունները հանգեցնում են միասնական ցանկից արտադրանքի տեսակը (տեսակները) կամ խումբը (խմբերը) հանելուն, առաջարկին կցվում են սույն Կարգի 8-րդ կետով նախատեսված փաստաթղթերը։

Անդամ պետությունների առաջարկների հիման վրա միասնական ցանկում ընդգրկված արտադրանքի տեսակի (տեսակների) կամ խմբի (խմբերի) անվանումը, որի նկատմամբ Միության տեխնիկական կանոնակարգեր չեն ընդունվել, կարող է լրացվել արտադրանքի տեսակի (տեսակների) կամ խմբի (խմբերի) անվանման պարզաբանումներ պարունակող ծանոթագրությամբ։

10. Սույն Կարգի 4-րդ, 8-րդ եւ 9-րդ կետերում համապատասխան փաստաթղթերի կցմամբ նշված առաջարկները (այսուհետ՝ առաջարկ) Հանձնաժողով են ներկայացվում անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով անդամ պետությունների՝ Հանձնաժողովի հետ փոխգործակցության համար լիազորված պետական իշխանության մարմինների կողմից։

Հանձնաժողովում ստացված առաջարկն ուսումնասիրվում է Հանձնաժողովի

կողմից այն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում։

11. Այն դեպքում, երբ ստացված առաջարկի ուսումնասիրության ընթացքում Հանձնաժողովի կողմից հայտնաբերվել է ներկայացված առաջարկի անհամապատասխանություն Պայմանագրին, միջազգային պայմանագրերին եւ Միության իրավունքի մաս կազմող ակտերին կամ սույն Կարգով նախատեսված տեղեկությունների բացակայություն, Հանձնաժողովն առաջարկի վերաբերյալ եզրակացություն է նախապատրաստում եւ այն ուղարկում է անդամ պետության՝ առաջարկը ներկայացրած պետական իշխանության մարմին, որը լիազորված է Հանձնաժողովի հետ փոխգործակցության համար։

12. Անդամ պետության կողմից նախապատրաստված եւ Հանձնաժողովում ստացված առաջարկը (բացառությամբ սույն Կարգի 11-րդ կետում նշված դեպքերի) ուղարկվում է անդամ պետություններ։

Անդամ պետությունները, նշված առաջարկն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 60 օրացուցային օրվա ընթացքում, Հանձնաժողով են ներկայացնում առաջարկի վերաբերյալ դիրքորոշումներ։

13. Այն դեպքում, երբ սույն Կարգի 12-րդ կետին համապատասխան անդամ պետությունների՝ Հանձնաժողով ներկայացված դիրքորոշումները պարունակում են դիտողություններ ու առաջարկներ կամ սույն Կարգի 12-րդ կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո Հանձնաժողովը չի ստացել անդամ պետությունների դիրքորոշումը, Հանձնաժողովն ապահովում է անդամ պետությունների պետական իշխանության շահագրգիռ մարմինների ղեկավարների (ղեկավարների տեղակալների) բանակցությունների անցկացումը։

Նշված բանակցությունների արդյունքները ձեւակերպվում են արձանագրությամբ, որի պատճենը Հանձնաժողովն այն ստորագրելու օրվանից ոչ ուշ, քան 5 օրացուցային օրվա ընթացքում ուղարկում է անդամ պետություններ։

14. Սույն Կարգի 13-րդ կետում նշված բանակցություններն անցկացնելու օրվանից հետո 30 օրացուցային օրվա ընթացքում Հանձնաժողովը,

անհրաժեշտության դեպքում, ապահովում է առաջարկի լրամշակումը, նախապատրաստում է Հանձնաժողովի ակտերի համապատասխան նախագծերը եւ դրանց կցվող փաստաթղթերի փաթեթները՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգին (այսուհետ՝ Աշխատանքի կանոնակարգ) համապատասխան։

15. Հանձնաժողովն ապահովում է միասնական ցանկում արտադրանքն ընդգրկելու, միասնական ցանկից արտադրանքը հանելու կամ միասնական ցանկում ընդգրկված արտադրանքի տեսակի (տեսակների) կամ խմբի (խմբերի) անվանման մեջ փոփոխություններ կատարելու հարցերի վերաբերյալ Հանձնաժողովի ակտերի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացումը՝ Աշխատանքի կանոնակարգի IX բաժնին համապատասխան։

16. Միասնական ցանկում արտադրանքն ընդգրկելու, միասնական ցանկից արտադրանքը հանելու կամ միասնական ցանկում ընդգրկված արտադրանքի տեսակի (տեսակների) կամ խմբի (խմբերի) անվանման մեջ փոփոխություններ կատարելու հարցերի վերաբերյալ Հանձնաժողովի ակտերի նախագծերը, որոնք լրամշակվել են, հաշվի առնելով կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը, ուսումնասիրվում են Տեխնիկական կարգավորման, սանիտարական, անասնաբուժական եւ բուսասանիտարական միջոցներ ձեռնարկելու հարցերով խորհրդատվական կոմիտեի նիստում՝ դրանք Հանձնաժողովի կոլեգիայի նիստում ուսումնասիրելու համար ներկայացվելու նպատակով։

17. Սույն Կարգի 16-րդ կետում նշված Հանձնաժողովի ակտերի նախագծերի վերաբերյալ անդամ պետությունների միջեւ այն տարաձայնությունները, որոնք Տեխնիկական կարգավորման, սանիտարական, անասնաբուժական եւ բուսասանիտարական միջոցներ ձեռնարկելու հարցերով խորհրդատվական կոմիտեի նիստին չեն կարգավորվել, ուսումնասիրվում են Հանձնաժողովի կողմից Աշխատանքի կանոնակարգով սահմանված կարգով։

18. Միասնական ցանկի վարումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից տեղեկատվական-հեռահաղորդակցական «Ինտերնետ» ցանցում՝ Միության պաշտոնական կայքում այն հրապարակելու եւ միասնական ցանկում արտադրանքն ընդգրկելու, միասնական ցանկից արտադրանքը հանելու մասին Հանձնաժողովի համապատասխան որոշումների հիման վրա դրանում փոփոխություններ կատարելու կամ միասնական ցանկում ընդգրկված արտադրանքի տեսակի (տեսակների) կամ խմբի (խմբերի) անվանման մեջ փոփոխություններ կատարելու միջոցով։